ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

25.06.2025 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111 գնման պայմանագրի

«04» «08» 2025թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ՄՈՍ-ՇԻՆ» և «ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունները (համատեղ), որոնք գործում են համաձայն 13.06.2025 թվականի N 7 համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի, ի դեմս «ՄՈՍ-ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Մ.Աբրահամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.06.2025 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքում հիմքով փոսային նորոգման աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել մինչև 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.*Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ՄՈՍ-ՇԻՆ» ՍՊԸ	«ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Հասցե Ք.Երևան, Ամիրյան փ. շենք 26/4	Հասցե Արարատի մարզ գ. Մասիս Արտաշատյան խճ. 45
ՀՀ ֆինանսների նախարարության գանձարանային վարչություն	Բանկը Հայէկոնոմբանկ ԲԲԸ	Բանկը Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 900012410099	Հ/Հ 163098065739	Հ/Հ 220013334499000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02885911	ՀՎՀՀ 04235144
Վ.Պապիկյան ---------- (ստորագրություն) Կ.Տ	Մ.Աբրահամյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Ն.Բաղդասարյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
25.06.2025 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111 գնման պայմանագրի
«04» « 08 » 2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187/511	Երևան քաղաքում հիմքով փոսային նորոգման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	50000000	50000000	50000000	50000000	50000000	50000000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գանձապետական վարչություն
ՀՀ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄՈՍ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե Ք.Երևան, Ամիրյան փ. շենք 26/4
Բանկը Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163098065739
ՀՎՀՀ 02885911

Մ.Աբրահամյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԳԱՐԱՆՏ ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցե Արարատի մարզ գ. Մասիս
Արտաշատյան խճ. 45
Բանկը Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220013334499000
ՀՎՀՀ 04235144

Ն.Բաղդասարյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«Արտաշատ» մասնաճյուղ
ՀՀ, 0701, ք. Արտաշատ,
Աթարբեկյան փ. 135/3
Հեռ.՝ +374 10 510 910 *0901#
Տեղեկատու՝ 86 86
էլ. փոստ՝ artashat@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Artashat Branch
135/3 Atarbekyan St.,
Artashat 0701, RA
Tel.: +374 10 510 910 *0901#
Call Center: 86 86
E-mail: artashat@aeb.am
www.aeb.am

16309-72/0255

01.08.2025թ.

ԵՐԱՇԽԻՔ

(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄՈՍ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը՝ **մինչև 28/05/2027թ. ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **vachagan.mejunc@yerevan.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչի տեղակալ՝ **Յ. Հակոբյան**

«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ **Ա. Մարգարյան**

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«Արտաշատ» մասնաճյուղ
ՀՀ, 0701, ք. Արտաշատ,
Աթարբեկյան փ. 135/3
Հեռ.՝ +374 10 510 910 *0901#
Տեղեկատու՝ 86 86
էլ. փոստ՝ artashat@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Artashat Branch
135/3 Atarbekyan St.,
Artashat 0701, RA
Tel.: +374 10 510 910 *0901#
Call Center: 86 86
E-mail: artashat@aeb.am
www.aeb.am

16309-72/0256

01.08.2025թ.

ԵՐԱՇԽԻՔ

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՄՈՍ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով **ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **7,500,000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը՝ **մինչև 22.05.2026թ. ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **vachagan.mejunc@yerevan.am** էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/111** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչի տեղակալ՝ **Յ. Հակոբյան**

«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ **Ա. Մարգարյան**